ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22 mrgashen.kotayq@mta.gov.am

թիվ 182
24 օգոստոսի 2015թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆ

Հարգելի պարոն Կ. Գուլոյան

Ձեզ ենք ուղարկում Մրգաշեն համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՐԱՍՅԱՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔ

ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ

ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄՐԳԱՇԵՆ 2015Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄՐԳԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԻ

Արձանագրություն

Սույն թվականի օգոստոսի 20-ին Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի 2014 թվականի և 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների հաշվետու ժողովը:

Ժողովին ներկա էին համայնքի ղեկավարը, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցները, ավագանու անդամները, համայնքի ազգաբնակչությունը:

Բացման խոսքով ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Արամայիս Արամյանը :

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ֆինանսական գործունեության մասին տեղեկատվություն
2. Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառ
3. Համայնքի ղեկավարի գործունեությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում
4. Համայնքի ղեկավարի գործունեությունն առևտրի և ծառայությունների բնագավառում

ԶԵԿՈՒՅՑՈՂ՝
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄԱՅԻՍ ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵԼՈՒՅԹԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքը ունի 502 տնտեսություն, համայնքի բնակչության թվաքանակը կազմում է 2145 մարդ:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1112,36 հա:
2013 թվականի դեկտեմբերի 13-ին համայնքի ավագանին իր թիվ 38-Ն որոշմամբ ընդունել է 2014թվականի բյուջեն, որի եկամուտները կազմել են 47 մլն 438 հազար 900 դրամ, ծախսերը՝ 47 մլն 438 հազար 900 դրամ:

Հողի հարկի չափը Մրգաշենի վարչական տարածքում գտնվող հողի համար կազմել է 5 մլն 700 հազար դրամ: 2014թ. հողի հարկը հավաքագրվել է 5 մլն 420 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանի 95 %-ը:
2014թ. գույքային հարկերը Մրգաշենի վարչական տարածքում կազմել է 1՝ մլն 370 հազար դրամ, հավաքագրվել է 1 մլն 508 հազար 900 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 110%-ը:
2014 թվականի դեկտեմբերի 12-ին համայնքի ավագանին իր թիվ 32-Ն որոշմամբ ընդունել է 2015 թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 48 մլն 305 հազար 200 դրա, ծախսերը 48 մլն 305 հազար 200 դրամ:
Հողի հարկը կազմել է 5 մլն 700 հազար դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 1 մլն 783 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանի 32 % -ը:
Գույքային հարկերը կազմել են 1 մլն 520 հազար դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 782 հազար 400 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 51,1 %-ը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարանին օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքների խնդրանքը մեծամասամբ բավարարվել է՝ համայնքի անապահով ընտանիքներին տրվել է դրամական օգնություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵԼՈՒՅԹԸ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվետու տարում համայնքում իրականացվել է

1. Կանոնավոր կերպով կազմակերպվել է աղբահանությունը
2. Ձմռան ամիսներին կանոնավոր կերպով կազմակերպվել են ձյան մաքրման աշխատանքները

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵԼՈՒՅԹԸ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվետու տարում համայնքում իրականացվել է

1. Օրենքով վերապահած լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացվել առևտրի 6 օբյեկտում:

2. Առևտրի 4 օբյեկտներին տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի և իրացման թույլտվություններ, որոնցից գանձվել են համապատասխան տուրքի գումարները:

Նիստի օրակարգային հարցերը սպառվեցին և նիստն հայտարարվեց փակված:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄԱՅԻՍ ԱՐԱՄՅԱՆ